նում էր: Եւ եթէ նստում էր այս եւ այն սեղանի մօտ, մարդիկ սկսում էին անանկատելի կերպով հետզհետէ հեռանալ նրանից:

— Այդ մարդը մի յայտնի լրտես է, — ասաց Սագօն, ցոյց տալով նրան:

— Ի՞նչ ազգից է, — հարցրի ես:

— Հայ է եւ, բացի հայ լինելը, «էֆենդի» է, բազմաթիւ տիտղոսներ ունի:

— Եւ մատնում է հայերի՞ն:

— Էլ ումը՞ պէտք է մատնե...

«էֆենդին» գնաց, նստեց մի խումբ երիտասարդների մօտ, որովհետեւ ինքն եւս նրանց հասակակից էր: Հրամայեց իր հաշոով գինի տան:

— Ես պատրաստ եմ գրաւ բռնել, — ասաց Սագօն, — որ այդ անպիտանը հիմա կսկսէ ազգասիրական ճառեր կարդալ եւ գուցէ կսկսէ երգել իր յօրինած ոտանաւորներից մէկը, որի մէջ անդադար կրկնում է «Ո՛հ, Հայաստան» բառերը:

Բայց դրանցից եւ ոչ մէկը չկատարուեցաւ, որովհետեւ գիշերից շատ անցել էր, սրճատան յաճախորդները սկսել էին հետզհետէ հեռանալ, եւ Թէոս ախպերը պատրաստւում էր ճրագները հանգցնել: Աղմկալի դահլիճը մի քանի րոպէի մէջ դատարկուեցաւ: Երբ Թէոս ախպերը վերջին երկու ճրագը հանգցնելու վրայ էր, երկու երիտասարդները վեր կացան, բարի գիշեր ասացին ինձ եւ Սագօյին եւ հեռացան դէպի սրճատան մթին անկիւնը: Այնտեղ այնպէս բաց, առանց ծածկոցի, պառկեցին նրանք տախտակեայ մերկ նստարանների վրայ, իրանց ուղեւորութեան պարկերը բարձի փոխարէն գլխների տակը դնելով: Թէոս ախպերը այնքան բարի գտնուեցաւ, որ դուրս չվռնդեց նրանց փողոցը, ասելով թէ իր սրճատունը գիշերելու տեղ չէ: Ես խիստ տխուր տրամադրութեան մէջ բաժանուեցայ նրանցից: «Խեղճ երիտասարդներ, մտածում էի ես, այդպէս անտուն, անտէր, աղքատ, որպէս մի ողորմելի մուրացկան, թափառում էք երկրէերկիր, մի ընկած ժողովրդի օգնելու անձնուիրութեամբ... Դուք պէտք է մրցութիւն անէք օտարազգի միսիոնարի հետ, որ յայտնւում է կառքերով, ապրում է շքեղ պալատներում եւ ոսկին սփռում է, ինչպէս փոշի, որ բոլորի աչքերը կուրացնում է... Բայց մի բան կայ ձեր մէջ, որ բարձր եւ հզօր է, քան այն բոլոր փառքը եւ զօրութիւնը, որ վայելում է օտարազգին, դա այն մեծ սէրն է, որ ունէք դուք դէպի ձեր յանձն առած գործը:

Երբ ես մտայ այն սենեակը, որտեղ թողեցի Ասլանին, Սագօյին նրա մօտ գտայ: Երեւում էր, որ Սագօն, սրճատնից դուրս գալուց յետոյ, ետեւի դռնից մտել էր նրա մօտ: Բայց ո՞վ ասաց նրան, որ Ասլանը այնեղ է...